

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻՆԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան

**ԱՍՏԾՈՒՆ ՏՐՎԱԾ ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ (ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ
ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ)**

Հայ եկեղեցու դավանաբանությունը ընդունում է **Սուրբ Երրորդությունը՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի**, որոնցից յուրաքանչյուրը Աստվածաշնչի տարբեր գրքերում հանդես է գալիս տարբեր անուններով ու անվանումներով¹: Հայերեն բնագրերում առկա հատուկ անունների և անվանումների համեմատությունը ռուսերեն թարգմանության հետ ի ցույց է դնում հետաքրքիր իրողություններ, մանավանդ երբ համեմատում ենք ռուսերեն երկու բնագրեր՝ НЗ-ն и ЖБ-ն²:

Անդրադառնանք Որդի Աստծուն և Սուրբ Հոգուն տրվող անունների ու անվանումներին³:

ՀԻՍՈՒՄ (հուն.՝ **Ιησους**, ռուս.՝ **Иисус**) // **Փրկիչ**, (հուն.՝ **σωτηρ**, ասոր.՝ **Փառուկա**, ռուս.՝ **Спаситель**): Արական եբրայական Հիսուս անունը հունական տառադարձությունն է եբրայական **Եշու/Եշուա** անվան, որ նշանակում է «փրկիչ կամ խնայող» (ԲՅԱ, 161)⁴, *Աստված է մեծանձն* (ՀԱԲ, հ Գ, 526)⁵: Իսկ սա նշանակում է, որ դեռևս Հին Կտակարանում *փրկիչ* նշանակությունն ունեցող **Հեսու** անունը կար. Հին Կտակարանում գործածվում է **Յեսու/Հեսու** կամ **Յեսուս** անունը, և այդ անունը կրում էին մի քանի անձինք (Ել. ԺԷ 9 (Иисус), 10 (Иисус), Թվ. ԺԱ 28, ԺԳ 17, ԺԴ 6, 38, 65, Բ Օր. Գ 21, Հս. Ա 1, 5, 6...Դ 1,15...), բայց ինչպես նշում է ԲՄԳ-ն «Ոչ *որքերք կրեց այս անունն այնպես յիրաւի և արժանի, և ոչ կատարեց լի և լի այն բառին նշանակութիւնն, ինչպէս Յիսուս Քրիստոս, որ կը փրկէ ի մեղաց և ի դժոխաց, և ստացաւ վասն մեր գերկինս իւրով արեամբ*»: Ապա անմիջապես հավելում է, որ ուրեմն

¹ Հայր Աստծու անունները տրված են առանձին հոդվածով:

² *Новая Женедевская учебная Библия* (Синодальный перевод), 1998 г. (НЖБ):

³ Համեմատությունը կատարվել է *Новый завет на греческом и русском языках* (НЗ), 2002:

⁴ Տե՛ս *Բառգիրք հայկազեան լեզուի*, 1769:

⁵ Ըստ БС-ի՝ **Иисус** նշանակում է *Иегова спасает/Եհովան փրկում է/*, ինչն արդեն բոլորովին այլ ընկալում է տալիս անվանը: Տե՛ս *Библейский словарь*, 1995:

այդ անունը տրվեց Հիսուսին աստվածային հրամանով՝ «...*իբրև յատուկ անուն ի վաղուց ցանկալի Փրկչի, և զոր քիւրք քիւրուց փրկելոց յերկինս յաւիտեան պիտի պաշտեն իբրև իրենց մի միայն և ամենափառաւոր Ազատիչը*»⁶։ Փաստորեն անվան բուն իմաստի և այդ անունը կրող անձի միջև ուղղակի կապ կա, և այդ կապը հաստատվում է Աստծու նախախնամությամբ և հաստատվում Նոր Կտակարանում։

Ըստ ՆՀԲ-ի՝ «... *Յիսուս, այն, որ փրկէ, ապրեցուցիչ, կեցուցիչ, ազատիչ, կենարար*» (հ.Բ, 964)։ Ահա թե ինչու Մատթեոսի Ավետարանում ուղղակիորեն, ինչպես հինկտակարանյան հեղուների անունների մեկնությունն է տրվում, կարդում ենք. «*Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Յիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից*» (Ա 21)։

Ռուսերենում *Հեսու/Հիսուս* տարբերակումը չկա. թե՛ հինկտակարանյան մի քանի անձինք (նույնիսկ՝ մեկ տեղանուն)՝ թե՛ *Հեսու*-ն, թե՛ *Հիսուս* անվանվում են *Нусыс*, սակայն հայերենում դրանք տարբերակված են։ Հին Կտակարանի մի ամբողջ գիրք անվանված է *Հեսու* անվամբ՝ *Յեսու Նաւեայ*։ Իսկ Նոր Կտակարանում միայն *Հիսուս* անունն է, որը նկատի ունի Քրիստոսին։ Մեկ այլ հետաքրքիր տարբերակում ևս կա. ավետարաններում գործածվում է *Հիսուս*, իսկ *Թողթերում...*՝ *Քրիստոս*, քանի որ ավետարանները նրա կյանքն ու գործունեությունն են ներկայացնում, իսկ *Թողթերը...*՝ աստվածային էությունն ու կենարար գործը։

Հին Կտակարանը մեզ ծանուցում է, որ կգա Աստծու ընտրյալը, որը կլինի **Մարգարե**, ինչպես Մովսեսը. «*Քո Եհովայ Աստուածը քո միջիցը քո եղբայրներիցը ինձ պէս մի մարգարէ վեր կկացնէ քեզ համար, նորան լսեցէք*» (Բ Օր. ԺԸ 15)։ Կլինի **Քահանա** և **Քահանայապետ**, ինչպես Մեղքիսեդեկը. «*Այսպէս էլ Քրիստոսը ոչ թէ ինքն իր անձը փառաւորեց, որ Քահանայապետ լինի, այլ նա, որ ասեց նորան, թէ՛ Իմ Որդին ես դու, ես այսօր ծնեցի քեզ... Դու քահանայ ես յաւիտեան Մեղքիսեդեկի կարգի պէս*» (Եբր. Ե 5-6)։ Կլինի **Թագավոր**, ինչպես Դավիթը։ Ուրեմն **Աստված** և **Աստծու որդի**, որը, մարգարե, քահանա, թագավոր լինելով հանդերձ, «*Քրիստոսն է ամենը և ամենի մէջ*»⁷ (Առ Կող. Գ 11)։

Թեև *Աստվածաշնչի* համաբարբառի (ԹԱԱՀ)⁸ տվյալներով *Հիսուս Քրիստոս* անվան գործածությունները 672-ն են, բայց իրականում դրանք Նոր Կտակարանում ավելի շատ են։ Այսպես՝ Համաբարբառում ներկայաց-

⁶ Տե՛ս *Բառարան Սուրբ Գրոց...*, 1881(1992), 376։

⁷ Թերևս այս խոսքերի ազդեցությամբ է պայմանավորված Գր. Նարեկացու *Մատյանի* հետևյալ տողը՝ «*Ես եմ ամենքը, և ամենքինն է պարփակված իմ մէջ*»։

⁸ Տե՛ս *Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց*, 1895, Դ։

ված 101 անվան փոխարեն իրականում միայն Մատթեոսի *Ավետարանում* Հիսուս Քրիստոս անունը գործածված է 170 անգամ, Մարկոսի *Ավետարանում* ներկայացված 32-ի փոխարեն 93 անգամ, Ղուկասի մոտ՝ 38-ի փոխարեն 94 անգամ և այլն:

Ինչպես նշեցինք վերևում **Յեսու** կամ **Յիսուս** անունը հունարեն ձևն է եբրայերեն **Եշուս** անվան, որ թարգմանվում է **փրկիչ**: Այս անունը տրվեց Քրիստոսին Աստծու հրամանով Գաբրիել հրեշտակապետի կողմից, որը Հովսեփին և Մարիամին հայտնեց Աստծու կամքը՝ Մարիամին Սուրբ Հոգու շնորհով որդի պարգևելու. «*Յովսեփ, որդի Դավթի, մի՛ երկրնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է: Ծնցի որդի, և կոչեացես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեացէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց*» (Մտթ. Ա 20- 21): Մատթեոսի *Ավետարանում* նա անվանվում է նաև **Էմմանուել**, Ղուկասի *Ավետարանում*՝ **Որդի Աստուծոյ**. «*Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեացի*» (Ղկ. Ա 35):

Հիսուսը Տիրոջ սովորական անունն է, մարդկային, երկրային անունը, որն անշուշտ չպետք է գործածվի *Աստված* բառի հետ, մինչդեռ՝ «...*Նրանցից է նաև Քրիստոս՝ ըստ մարմնի. և նա է բոլորի վրայ յաւիտեանս օրհնեալ Աստուած*» (Ա-3, Հոմ. Թ 5):

Ըստ *Աստվածաշնչի*՝ փոքր է Ադամից չորս հազար տարով: Ծնվել է Բեթղեհեմ քաղաքում մեր թվականության մոտ չորրորդ տարում (սակայն համարվում է մեր թվականության սկիզբը) և ստացել է իր երկրային անունը՝ **Հիսուս Նազովրեցի**:

Իր գործունեությունը սկսել է 30 տարեկանում, որը տևել է երեքուկես տարի: Հիսուսի վարքը պատմվում է չորս Ավետարանների մեջ: Նա ինքն Աստվածն է՝ Սուրբ Երրորդության երկրորդ անձը՝ **Աստծու Միածին Որդին**, որն էլ դարձավ մարդկության **Փրկիչը**: Հիսուսն է միջնորդը Աստծու և մարդու միջև, որովհետև նա և՛ Աստված է, և՛ մարդ (Եբր. Թ 15): Այս գրքում հիշեցվում է, որ «*Որդին հրեշտակներից մեծ է, ... Փրկութիւն Քրիստոսով և ոչ թէ հրեշտակներով, ... Քրիստոս գերազանց՝ քան Մովսէսը*»:

Փրկիչը, լինելով Հիսուս անվան բառացի իմաստը, դառնում է նաև անուն և հաճախ կիրառվում է թե՛ առանձին՝ նկատի ունենալով Հիսուսին՝ «-Մի՛ վախենաք, որովհետև ահա մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի լինի. Թէ այսաւր ձեզ **Փրկիչ** ծնուեցաւ Դաւիթի քաղաքումը, որ է Քրիստոս Տէրը» (Ղկ. Բ 10-12) և թե՛ հենց Հիսուս անվան հետ՝ դառնալով մականուն. «*Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեստն մերոյ փառք...*» (Հդ. Ա 25): Գրաբար այս հատվածը արևելահայերեն տեքստում

թարգմանված է. «...նրան՝ միակ Աստծուն և մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը, փառք...» (Ա-3):

Սակայն ասենք, որ Փրկիչ անվանումը տրվում է նաև Հայր Աստծուն Հին Կտակարանի մի քանի գրքերում՝ Բ Օրինաց. «Ապստամբեաց յԱստուծոյ փրկչէ իւրմէ», «...ապստամբեաց Աստծու՝ իր **Փրկչի** դէմ» (ԼԲ 16), Դատավորներին. «...յարոյց Տէր **Փրկիչ** Բարայելի» (օ **θεου σωτηρος**, ասոր.՝ **Փառոկա**) (Գ 9), Բ Թագավորությունների. «Տէրն իմ վէմն է, ամրութիւնն ու **փրկիչը**» (ԻԲ 2), Սաղմոսների գրքում՝ մի քանի անգամ. «Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ եւ **փրկիչ իմ**» (սօտորիա **μου**) (ԻԴ 5) և այլն: Չմոռանանք, որ Աստված ինքը իրեն համարում է Բարայելի փրկիչը. «...քանզի ես եմ քո Տէր Աստուածը՝ Բարայելի Սուրբը, որ պիտի փրկեմ քեզ» (Ես. ԽԳ 3, 11): Հին Կտակարանում Հերոբոամ արքան ևս համարվում է փրկիչ (Դ Թգ. ԻԲ 2), Դատավորների գրքում՝ որոշ դատավորներ (Դտ. Գ 9, 15): Բայց հետո միայն գալու էր այն միակ Փրկիչը, որին Աստված համարեց իր միակ ու անփոխարինելի Որդին:

Քրիստոս, Օծյալ, Մեսիա (հուն.՝ **Χριστος/Μεσσιας**, ռուս.՝ **Христос**, ասոր.՝ **Մշիխա**): **Քրիստոս**-ը եբրայական *Մեսիա* անվան հունարեն համարժեքն է (հուն.՝ *xrio- oδeι*, *xristos- oδuված*), որ նշանակում է *Օծյալ*: Ըստ ԲՄԳ-ի՝ «**Քրիստոս** անունը Փրկչին պաշտօնին տիրոջուն է, և չէ պարտ նկատուիլ իբրև լոկ անուն, որոշելու համար մեր Տէրն Յիսուս կոչուած ուրիշ անձերէ»⁹:

Հր. Աճառյանը նշում է, որ **Մեսիա**-ն անպատշաճ է տալ սովորական մահկանացուներին (ՀԱԲ, ԽԳ, 318), ուստի այս անունը գործածության մեջ մնում է եզակի՝ իբրև Հիսուս Քրիստոսի մականուն. «Գտաք **զՄեսիայն** (որ թարգմանի Քրիստոս)» (Հվի. Ա 41, Դ 25):

Հին Կտակարանի Մեսիան Նոր Կտակարանում դառնում է Քրիստոս. «Հերովդէս...հարցանէր ի նոցանէ, թէ ուր ծնանիցի **Քրիստոսն**» (Մտթ. Բ 5), «Դու ես **Քրիստոսն**, Որդի Աստուծոյ կենդանւոյ» (ԺՁ 16):

Եսայի մարգարեն գուշակեց Մեսիայի գալուստը և **Էմմանուէլ/Մանուէլ** (հուն.՝ **Εμμανουηλ**, ռուս.՝ **Еммануил**), անվանեց նրան¹⁰: Սա եբրայական անուն է, որը կազմությամբ բարդ բառ է և նշանակում է **Աստված մեզ հետ է** (Ես. Է 14, Ը 8, Մտթ. Ա 23). «Ահա կոյս յասցի եւ ծնցի որդի, եւ կոչեցեն զանունն նորա **Էմմանուէլ** (Ես. Է 14), որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած» (Մտթ. Ա 23): Ռուսերեն աղբյուրները նույնպես անվան իմաստը մեկնում են *աստված մեզ հետ է*¹¹:

⁹ Տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, 581:

¹⁰ Եսայու մարգարեության մեջ Էմմանուէլ-Քրիստոս և Աստված էությունների մասին տե՛ս **Գրիգորյան Ֆ.**, հ 1, 2013:

¹¹ Տե՛ս Библейский словарь, с. 192.

Էմմանուել անվան կրճատված ձևն է **Մանուելը**, ինչպես Եղիազարից՝ Ղազար: Անվան այս տարբերակը գործածված է հայ հին բանաստեղծության մեջ: Հայ բանաստեղծության մեջ անվան իմաստն է ակնարկում Ֆրիկը. «-Կոյսն է ծրնող Մանուէի, Որ մեզ **աստուած** թարգմանի նա...» (Բ, 123): Բացի ուղղակի իմաստից, դառնում է շրջասության եզր՝ ակնարկելով Մարիամ Աստվածածնին. «Բանն, որ ի հորէ էր լոյս, Ի քէն ծագեցաւ մեզ յոյս, Յարգանդէ կոչեաց Յիսուս, **Մայր Մանուէի** սուրբ կոյս» (Հ. Երզ. ԲԶ, 36, 97-102), «Չքնաղ, ահեղ, զարմանալի, **Մայր անարատ Մանուէի**...» (Ն.Մոկ., Բ, 137)¹²:

Ընդհանրապես պետք է նշել, որ հայ բանաստեղծության մեջ անվան **Մանուել** տարբերակը շատ հաճախական է, ինչպես՝ «Յեսայի գոչէ՛ Ահայ կոյս յղացի Նոր զարմանալի ծնցի **Մանուիէլ**» (Խ.Կեչ., Բ, 167), «Երգեաց Գաբրիէլ, **Չանեղն Մանուէլ**, Էացաւ ի քէն տիրամայր, Ընկալաւ մարմին» (Գ.Աղթ., Բ, 164), «Նազարէթ աջ եկեալ պետն Գաբրիէլ, Աւետեաց սրբուհոյն **գտէրն իմ Մանուէլ**, Ծնեալն ի քէն անմահ տիրէ զԻսրայէլ, Հոգով, մարմնով Յիսուս երկու մայր, որ մեր է» (Հ.Կաֆ., ՈՒՄԲ, հ2, 178), «Չի ի քէն ծնանի **Մանուէլ արքայն**» (Ս. Կաֆ., ՈՒՄԲ, հ2, 203):

Աստծու Որդի, Աստվածորդի, Որդի (հուն.՝ υιος θεου, ասոր.՝ **Բռա դ Ա-լահա**, ռուս.՝ **Сын Божий**): Սրանք Հիսուսին տրված անվանումներ են, որ նշանակում են, թե նա **Հայր Աստծու որդին** է:

Մարկոսի Ավետարանում նա **Որդի** է անվանվում. «Երկնքից մի ձայն եկաւ, որն ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի **Որդին**, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը»» (Մրկ. Ա 11): Հովհանի Ավետարանում (Ա 49) Հիսուսը և՛ **Ռաբբին** է, և՛ **Աստծու որդին**, և՛ **Իսրայելի թագավորը**. «**Ռաբբի՛**, դու ես **Աստծու Որդին**, դո՛ւ ես **Իսրայելի թագաւորը**»:

Մարդու Որդի/Որդի Մարդոյ (հուն.՝ υιος του ανθρωπου, ասոր.՝ **Բռա դ Նաշա**, ռուս.՝ **Сын Человеческий**): Հովհանի *Ավետարանի* Ե գլխում Հիսուս ամբողջովին բացահայտում է Հոր և Որդու էությունները, մասնավորապես՝ *Մարդու Որդու*. «...Հայրն ինքն իր մէջ կեանք ունի եւ կեանք է տալիս, նոյնպէս եւ Որդուն տուեց ինքն իր մէջ կեանք ունենալ եւ տալ: Եւ նրան իշխանութիւն տուեց դատաստան անելու, քանի որ **մարդու Որդի** է» (Ե 26-27), նաև Մատթեոսի *Ավետարանում*՝ «Որպէս **Որդի մարդոյ** ոչ եկն պաշտօն առնուլ, այլ՝ պաշտել...» (Ի 28):

Մարդու որդու մարդկային էությունը ավելի է հաստատվում **Դավթի որդի** անվանմամբ (հուն.՝ υιος Δαυιδ, ռուս.՝ **Сын Давидов**). «Ողորմեաց մեզ, Յիսուս, **Որդի՛ Դավթի**» (Մտթ. Ի 30-32): Հետաքրքիրն այն է, որ ռուսերենում տրվում է ոչ թե *Сын Человека*, այլ՝ *Сын Человеческий*:

¹² Օրինակները տրվում են ըստ Փ. Գ. Մեյթիխանյան, 2001:

ՄԻԱԾԻՆ (ասոր.՝ **Իիսիդայա**) - Հիսուս Քրիստոսին տրված մականունը:

ՆԱԶՈՎՐԵՑԻ/ՆԱԶՈՎՐԱՑԻ (հուն.՝ **Ναζωραϊος**, ասոր.՝ **Նասռայա**, ռուս.՝ **Назореум**) անվանումը դառնում է Հիսուս Քրիստոսի մականունը՝ Նազարեթ (հուն.՝ **Ναζαρετ**) քաղաքի անունից՝ «Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին, որ կոչէր Նազարեթ, զի լցցի բան մարգարէիցն թէ **Նազովրեցի** կոչեցի» (Մտթ. Բ 23, Մարկ. Ա 24, Ժ 47, ԺԶ 6, Ղկ. Դ 34, Հվի. ԺԸ 5, Գրծ. Բ 22, Դ 10): **Նազովրեցի** մականվան առաջացման մասին հետաքրքիր մեկնաբանություն է տալիս ԱԱՄ-ն. «Կան շատեր, որք **նէզէր** նշանակութեամբ, որ է **բաժնէկ**, կը մեկնեն, թէ Յիսուս Նազովրեցի ըսուեցաւ զատուած, նուիրուած մէկն ըլլալուն համար, կան ուրիշներ, որք **նէզէր** բառին նշանակութեամբ, որ է **ոստ, շառաւիղ**, կը մեկնեն, թէ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ, որպէս Եսայի գուշակած էր. «Եւ բղիսեցէ զաւագան յարմատոյն Յեսայա եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (ԺԱ 1, ԾԴ 2, Եր. ԻԳ 5, Չք. Գ, Չ 8, 12): Կայ մէկ ուրիշ մէկ մեկնությունն աւելի եւս յաւանական. Գալիլեա Հրէաստանի ամէնէն անարգ ու նուաստ հոշակուած երկիրն էր, եւ Նազարեթ ա՛յլ աւելի վատանում, մինչ զի Նաթանայէլ անգամ, որպէս Ծնորհալի եւս կը յիշատակէ, կը դրժուարէր հաւատալ, թէ Նազարեթէն բարի բան մը կրնայ ելլել (Հվի. Ա 46). հեթանոսներով խառնուած այդ երկրի Հրեայներուն լեզուն անգամ տարբեր էր Հրէաստանի միւս Հրեայներուն լեզուէն, ապա ուրէմն **Նազովրեցի** էր **պարսաւանում**, նախաստանաց անուն, որպէս այս մտօք գործածեցին Քրիստոսի աշակերտներուն համար ալ (Գրծ. ԻԴ 5): Քրիստոս **Նազովրեցի** կոչուէր, որպէս զի լիով կատարուէր մարգարէութեանց սա խօսք, թէ Մեսեայն պիտի ըլլար անարգ, արհամարհուած ու նուաստացած» (Ես. ԾԳ) (ԱԱՄ, 13)¹³:

Գառ, Աստծու գառ (հուն.՝ **αμνος του θεου**, ասոր.՝ **Փեռա դ Ալահա**, ռուս.՝ **Агнец Божий**): Սրանք այն ոճանուններն են, որ բնութագրում են Որդի Աստծուն՝ Հիսուսին: Չմոռանանք, որ հենց ինքը՝ Հիսուսը իրեն նմանեցնում է զատկական զոհաբերվող գառանը «...ибо и Пасха наша, Христос» (Ա Կորնթ. Ե 7): Մարդկային մեղքի համար զոհ դարձած Քրիստոսը դառնում է **Գառն Աստուծոյ** (Հվի. Ա 29):

Ռաբբի, Ռաբբունի, Բաբունի, Վարդապետ (հուն.՝ **Ραββι, Ραββουνι**, ասոր.՝ **Ռաբի**, ռուս.՝ **Равви, Раввуни**): Մարկոսի Ավետարանում Պետրոսը Հիսուսին կոչում է **Ռաբբի**. «**Ռաբբի՛**, ահաւասիկ թգեմին, որին անիծեցիր, չորացել է» (ԺԱ 21): **Ռաբ** արմատը հին եբրայերէնում նշանակել է **գլուխ** և սուրբգրային տեքստերի բաղադրյալ անվանումներում թարգմանվել է **դահնապետ** (եբր.՝ **Բապ-Թապպախին**) (Գ Թգ. ԻԵ 8), **ներքինապետ** նշանակություններով. «Եւ ասէ թագաւորն ցԱսիանէզ՝ **ներքինապետ** իւր..» (Դն. Ա 3, Ե

¹³ Տե՛ս Աշխարհաբար Աւետարան և մեկնություն., 1894:

11): Հետագայում բառը ձեռք է բերում և սկսում է գործածվել հրեաների մեջ իբրև պատվանուն՝ **տեր** կամ **վարդապետ** նշանակությամբ: Եվ հետաքրքիրն այն է, որ այնքան **Ռաբ** տիտղոսը չէր պատվավոր, որքան **Ռաբբի**-ն, որ նշանակում էր **Տեր իմ** կամ **վարդապետ իմ**: ԵՇ-ն այս անվան նշանակությունը *בעלזקנין זוכנודון* է տալիս, ինչը, կարծում ենք, անդրադարձն է ավելի ուշ շրջանի ընկալման¹⁴: Այս անվան տարբերակ են նաև **ռաբբան** կամ **ռաբբուն**, որից էլ գալիս է **ռաբբունի**-ն: Մատթեոսի *Ավետարանում* ոչ միայն տրվում է այդ անվան բացատրությունը, այլև մեկնաբանվում. «Միրում են ընթրիքների ժամանակ պատուոյ տեղերը, ժողովարաններում՝ նախապատիւ աթոռները եւ հրապարակներում ողջոյններ առնել ու մարդկանցից կոչուել **ռաբբի**, որ նշանակում է **ուսուցիչ**: Բայց դուք որեւէ մէկին ուսուցիչ մի՛ կոչէք, որովհետեւ ձեր ուսուցիչը մէկ է, եւ դուք բոլորդ եղբայրներ էք... Եւ ուսուցիչներ չկոչուէք, որովհետեւ **Քրիստոս է ձեր ուսուցիչը**» (ԻԳ 7, 8, 9): Հովհաննի *Ավետարանում* պատվանունն ուղղակի տրվում է Հիսուսին. «Ասէ ցնա Յիսուս, Մարիամ: Եւ նա դարձաւ եւ ասէ ցնա Եբրայեցերէն, **Րաբունի**, որ թարգմանի վարդապետ» (Ա-3), «Յիսուս նրան ասաց՝ Մարիամ: Եւ նա դարձաւ ու եբրայերէն նրան ասաց՝ **Ռաբբունի**՝ (որ թարգմանում է՝ վարդապետ)» (Հվի. Ի 16, Ա-1):

Մարկոսի *Ավետարանում* Հիսուսին մեծահարուստ մեկը անվանում է **Վարդապետ** և ոչ մեկ անգամ. «Բարի՛ **Վարդապետ**, ի՞նչ պէտք է անեմ, որ յախտենական կեանքը ժառանգեմ» (Ժ 17): Հետաքրքիր է Հիսուսի պատասխանը. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստուած»:

Ոչ մեկ անգամ Նոր Կտակարանում **Ռաբբի** և **Վարդապետ** պատվանուններով ժողովուրդը և առաքյալները դիմում են Հիսուսին. «Պետրոս Յիսուսին ասաց. «**Ռաբբի**՝, լաւ է, որ մենք պատեղ լինենք...» (Մարկ. Թ 4), «Կորյոր նրան ասաց. «**Վարդապետ**, աչքերս թող բացուեն»» (Ժ 51), **Ռաբբի**՝ ԺԱ 21, Հվի. Ա 38, 49, Դ 31:

Իշխան, Առաջնորդ (հուն.՝ *ηγουμενος*, ռուս.՝ *Вождь*) Գրաբար և արևմտահայերեն և արևելահայերեն բնագրերում Մատթեոսի *Ավետարանում* տրվում է **իշխան**՝ փոքրատառ գրությամբ. «...ի քէն ելցէ ինձ **իշխան**, որ հովուենացէ գժողովուրդ...» (Բ 6), որը ռուսերեն համարժեքում ներկայացված է որպէս *Вождь – Առաջնորդ*:

Ալֆա և Օմեգա: Հունական այբուբենի առաջին ու վերջին տառերն են, որոնք խորհրդանշում են Հիսուսի սկիզբն ու վախճանը. «Ես եմ **Ալֆան և Օմեգան**» (Հայտն. Ա 8):

Սուրբ Հոգի (ռուս.՝ *Святой Дух, Дух Божия, Дух Господень*, ասոր.՝ *Ռուխա դ Կուդշա*) Աստվածաշնչում **Հոգի** բառի կիրառությունները ան-

¹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 369:

ցնում են մի քանի հարյուրից (460), և այդ բոլոր գործածություններում պետք է տարբերակել **հոգի, Հոգի, Աստծու Հոգի, Հոր Հոգի, Տիրոջ Հոգի, Սուրբ Հոգի, Ճշմարտության Հոգի** անվանումները¹⁵:

Հոգի բառի տարբեր իմաստային դրսևորումներ կան. Սուրբ Գրքում բառն ունի ամենատարբեր իմաստային կիրառություններ՝ շունչ, մարդկային հոգի: Բայց մինչ **Սուրբ Հոգին**, Հին Կտակարանի տարբեր գրքերում, սկսած *Ծննդոցից*, նախ և առաջ **Հայր Աստծու Հոգին** է, որ ամենասկզբում տարածվում է ջրերի վրա. «Երկիրն անձև ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրայ, և **Աստծու հոգին** շրջում էր ջրերի վրայ» (Ծն. Ա 2/Ա-3), Թվոց ԻԳ 7-ում՝ **Հոգի աստուծոյ**. «Եւ եղև **Հոգի Աստուծոյ** ի վերայ նորա...»: Այն մեկ այլ դեպքում կկոչվի **աստվածեղեն Հոգի**. Ելից ԼԱ 3-ում տրվում է **Հոգին**. «Եւ լցուցի զնա աստուածեղեն **Հոգւով** իմաստութեան և հանճարոյ և գիտութեան ամենայն գործոյ...» (Բեսելիէլի մասին), Թվ. ԺԱ 25, 26, Թվ. ԻԷ 18-ում. «Առ դու քեզ զՅեսու որդի Նաւեայ, զայր յորում գոյ **Հոգի**, և դիցես զձեռքս քո ի վերայ նորա», և ապա՝ **Տիրոջ հոգին**. «Եւ **Հոգի Տեսնն** զօրացոյց զԳեղէն» (Դտ. ԺԱ 29): Այդ Հոգին՝ որպես Հայր Աստված հաղորդակցվում է. «**Հոգի Տեսնն** խօսեցաւ յիս, և բան նորա ի լեզուի իմում» (Բ Թգ. ԻԳ 2): Ապա նաև՝ «Զանի որ ոչ թէ դուք էք, որ պիտի խօսեք, այլ ձեր **Հօր Հոգին**, որ պիտի խօսի ձեր միջոցով» (Մտթ. Ժ 20):

Հայերենում **Հոգի Աստուծոյ** և **Հոգի Տեսնն** կապակցություններին համարժեքներ են ռուսերեն տեքստերում **Дух Божия** և **Дух Господень**: Սրանք **Սուրբ Հոգի** անվանմանը նույնարժեք չեն:

Ինչպե՞ս աստվածային Հոգին ներհյուսվեց Սուրբ Երրորդության երրորդ անձին՝ Սուրբ Հոգուն:

Այնուհետև այդ **Հոգին** Աստված դրեց այն մարդկանց մեջ, ովքեր պետք է ծառայեին Վկայության խորանում. «Բարայէլացի ծերերի միջից ինձ համար հալաքի՛ր եօթանասուն տղամարդ, որոնց ճանաչում ես իբրեւ ժողովրդի մէջ ամենածեր մարդիկ: Նրանց կը բերես վկայութեան խորան, և նրանք այնտեղ կը կանգնեն քեզ հետ: Ես (Աստված) կ'իջնեմ այնտեղ, կը խօսեմ քեզ հետ և քեզ տուածս ոգուց (ի Հոգւոյդ, Ա-1)¹⁶ կ'առնեմ ու կը դնեմ նրանց մէջ...» (Ա-3. Թվ. ԺԱ 16, 17, 25): Այդ հոգին չունի միս ու արյուն, այն Աստծու անբաժանելի մասն է, եթե ոչ էությունը. «Բայց կը գայ ժամանակը, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կ'երկրպագեն Հօրը հոգով և ճշմարտութեամբ, քանի

¹⁵ Ի դեպ, ՏԵ-ն **Дух** ընդհանուր բառացանկից առանձնացված ներկայացնում է **Дух Божия**, **Дух Господень**, **Святой Дух** կապակցությունները, էջ 338:

¹⁶ Համամիտ չենք, որ արևելահայերենում **հոգին ոգի** է թարգմանված, մանավանդ որ հենց Սուրբ Գրքում խոսվում է դրանց տարբերակման մասին (Ա Թես. Ե 23, Եբր. Գ 12):

որ հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: Հոգի է Աստուած, եւ նրա երկրպագուները պետք է հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագեն» (Հվի. Դ 23,24): Հոգին այնուհետեւ պետք է անցնի Հիսուսին. «Քանի որ նա, ում Աստուած ուղարկեց, Աստծու խօսքերն է խօսում. որովհետեւ Աստուած Հոգին տալիս է առանց չափի: Հայրը սիրում է Որդուն եւ ամէն ինչ տուել է նրա ձեռքը: Ով հաւատում է Որդուն, ընդունում է յաիտենական կեանքը, իսկ ով չի հնազանդւում Որդուն, կեանք չի տեսնի, այլ նրա վրայ կը մնայ Աստծու բարկությունը» (Ա-3, Հվի. Գ 34, 35): Հորից և Որդուց Սուրբ Հոգին անցնում է առաքյալներին. «Իսկ **Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին**, որին Հայրը կ'ուղարկի իմ անունով, նա ձեզ ամէն բան կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ ես ասացի ձեզ» (Հվի.ԺԴ 26): Ինչպէս տեսնում ենք, բերված օրինակում Սուրբ Հոգին բացահայտվում է իբրեւ **Մխիթարիչ**, որը դառնում է ոճանուն Սուրբ Երրորդության երրորդ էության համար: Ընդ որում, ոչ միայն այդ օրինակում. «Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ **Մխիթարիչ տացէ ձեզ**» (Հվի. ԺԴ 16): Անուղղակիորեն Հիսուս իրեն ևս համարում է **Մխիթարիչ**¹⁷: Համեմատությունը ռուսերենի **Утешитель**, ասորո-բերենի **Փառակլետա** և հունարենի **παράκλητος** համարժեքների հետ ցույց է տալիս, որ թարգմանական որևէ հակասություն չկա:

Աստվածաշնչի տարբեր գրքերում *Սուրբ Հոգին* գործածվում է նաև առանց *Սուրբ* բաղադրիչի: Դրա փոխարեն հաճախ **Սուրբ Հոգին** ներկայանում է **Ճշմարտության Հոգի** (Дух Истины, πνευμα της αληθείας) տարբերակով. «Երբ որ գայ նա՝ **Ճշմարտութեան Հոգին**, ամենայն ճշմարտութեամբ կ'առաջնորդի ձեզ» (Հվի. ԺԶ 13):

Եսայու մարգարեության մեջ հոգին դառնում է իմաստության և հանճարի հոգի՝ ներհյուսվելով Աստծու էությանը. «Նրա վրայ պիտի իջնի Աստծու հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի և գործության հոգին, գիտության և աստվածապաշտության հոգին. Աստծու երկիւղի հոգին պիտի լցնի այն» (Ես. ԺԱ 2):

Եսայու մարգարեության մեջ նաև՝ **Դատաստանի և այրման հոգի**. «Տերը Սիոնի և Երուսաղեմի տղաների ու աղջիկների աղտեղությունը պիտի լուանայ, **դատաստանի հոգով և այրման հոգով** արիւնը նրանց միջից պիտի արբի» (Ես. Դ 4), իսկ Հռովմեացիների Ը 2-ում արդեն՝ **կյանք տվող հոգի**. «Որովհետեւ Քրիստոս Յիսուսով կեանք տուող հոգու օրէնքը ինձ փրկեց մեղքի եւ մահուան օրէնքից»: Եվ ի վերջո՝ **Հավիտենական Հոգի**. «Եթե ցուլերի ու նոխազների տարիներ և երիւնջների շաղ տրված մոխիրը մաքրում են պղծուածներին մարմնի մաքրության համար, որչա՛փ առավել արիւնը Քրիստոսի, որ **յաիտենական Հոգու** միջոցով ինքն իրեն պատարագ մատուցեց Աստծուն...» (Եբր. Թ 14):

¹⁷ Տե՛ս Греческо-русский словарь Нового Завета, 1997, 158:

Նոր Կտակարանը գրվել է հունարենով, և հայ թարգմանիչները, ի տարբերություն Հին Կտակարանի, կատարել են անմիջական թարգմանություն, ուստի հատուկ անունների և անվանումների անվանաբանությունը այսպիսով խարսխվում է հունարեն բնագրի վրա:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Библейский словарь, Нюстрем Эрик, перевод со шведского, под редакцией И. С. Свенсона, (БС), Санкт-Петербург, 1995:

Греческо-русский словарь Нового Завета, Перевод Баркли М. Ньюмана, М. 1997.

Новая Женевская учебная Библия (Синодальный перевод), 1998 г. (НЖБ):

Новый завет на греческом и русском языках (НЗ), ред. А.А. Алексеев, сост. Д.И. Захарова, Российское библейское общество, М., 2002:

Աշխարհաբար Աւետարան և մեկնութիւն. ըստ վարդապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վահան վարդ. Տէր-Մինասեան, Կ.Պոլիս, 1894:

Բառարան Սուրբ Գրոց..., Կոստանդնուպոլիս, 1881(1992):

Բառգիրք հայկազնան լեզուի, հատոր երկրորդ, ի Վենետիկ, 1769:

Գրիգորյան Ֆ., *Աստվածաշնչի հանրագիտարան*, հ 1, Եր. 2013:

Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց, աշխ.՝ Թադէոս վարդապետի Աստուածատուրեան, Յերուսաղէմ, 1895:

Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան*, Եր., 2001:

ПАРАНДЗЕМ МЕЙТИХАНИЯН

*Кандидат филологических наук
Ереванский Государственный Университет*

ДАННЫЕ БОГУ ИМЕНА И НАЗВАНИЯ В СВЯЩЕННОМ ПИСАНИИ (БОГ СЫН И СВЯТОЙ ДУХ)

РЕЗЮМЕ

Армянская догма признает Святую Троицу: Бог Отец, Бог Сын и Святой Дух, каждый из которых в разных книгах Библии имеет разные имена и названия. Иисус Христос фигурирует именами, данными только ему: **Աստվածորդի** (Божий Сын), **Աստծու որդի** (Сын Бога), **Դավթի որդի** (Сын Давида), **Մարդու որդի** (Сын Человека), **Որդի** (Сын), **Միածին** (Единородный), **Աստծու Գառ** (Агнец Божий), **Ռաբբի** (Равви), **Վարդապետ** (Учитель), **Քահանա** (Пастырь), **Քահանայապետ** (Главный Пастырь), **Փրկիչ** (Спаситель), а также именами и названиями, данными и ему, и Богу Отцу: **Տեր** (Господь), **Աստված** (Бог), **Թագավոր** (Царь), **Դատավոր** (Судья), **Իշխան** (Князь) и т.д.

Новый Завет был написан на греческом, и так как армянские переводчики делали прямой перевод, при переводе собственных имен конкретных противоречий почти нет. Собственные имена мы сравнили как в армянских текстах - древнеармянском, западноармянском и восточноармянском, так и с аналогами греческих, ассирийских и русских первоисточников.

PARANDZEM MEYTIKHANYAN

*PHD in Philology
Yerevan State University*

THE NAMES AND TITLES GIVEN TO GOD IN THE HOLY BOOK (GOD THE SON, HOLY SPIRIT)

SUMMARY

The Armenian dogma accepts the Holy Trinity: God the Father, God the Son and the Holy Spirit, each of them in different books of the Bible has different names and titles. Jesus Christ has the names given only to him: **Աստվածորդի** (Son of God), **Աստծու որդի** (Son of God), **Դավթի որդի** (Son of David), **Մարդու Որդի** (Son of Man), **Որդի** (Son), **Միածին** (Begotten), **Աստծու զառ** (God's Lamb), **Ռաբբի** (Rabbi), **Վարդապետ** (Teacher), **Քահանա** (Shepherd), **Քահանայապետ** (Chief Shepherd), **Փրկիչ** (Savior), also names and titles given to him and to God the Father: **Տեր** (Lord), **Աստված** (God) **Թագավոր** (King), **Դատավոր** (Judge), **Իշխան** (Prince) etc.

New Testament was written in Greek, and as in this case the Armenian translators made a direct translation, there are almost no specific contradictions while translating the proper names and titles. The Armenian proper names are compared with the Old Armenian, Western Armenian and Eastern Armenian versions of the text, as well as with Greek, Assyrian and Russian sources.